ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 106

ք. Երևան

12.02.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վառելափայտի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/3» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ էր ներկայացրել նաև «Կրեատիվ Քոնսթրաքշն Թեքնոլոջի» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 00913037, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գալշոյան 4-ի 1/2 տարածք /(այսուհետ՝ Մասնակից):

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.01.2024թ.-ի որոշմամբ «Կրեատիվ Քոնսթրաքշն Թեքնոլոջի» ՍՊԸ-ի հայտը գնահատվել էր բավարար և ընթացակարգի շրջանակներում ճանաչվել էր ընտրված մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված ժամկետում՝ վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

02.02.2024թ.-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ «Կրեատիվ Քոնսթրաքշն Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում պատվիրատուին չի ներկայացվել իր կողմից հաստատված /կնքված/ պայմանագիրը և պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, ինչպես նաև էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում մերժել է պայմանագրի շնորհման ծանուցումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և ընթացակարգի հրավերի 9.5 կետերի պահանջները՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հաշվի առնելով, որ «Կրեատիվ Քոնսթրաքշն Թեքնոլոջի» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝ «Կրեատիվ Քոնսթրաքշն Թեքնոլոջի» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ